ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար հաշվառման գրքերի ձեռքբերման
նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/08» ծածկագրով
գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «06» մարտի 2023թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի մուտքագրման (լրացման) մասին.

Յասոն ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) են առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ Յասոն ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի /հայտում առկա փաստաթղթերի, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

2.1. Ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

- դիմում-հայտարարության երրորդ նախադասությունում նշված չէ մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,
- դիմում-հայտարարության 1)-ին կետում նշված չէ մասնակցին փոխկապակցված անձանց «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/08» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին բավարարելու վերաբերյալ տեղեկատվությունը:

2.2. Ներկայացված հայտում առկա փաստաթղթերը հաստատված են լիազորված անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հայտով ներկայացված է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ՝ լիազորագիր (այսուհետ՝ Լիազորագիր): Լիազորագիրը Յասոն ՍՊԸ-ի կողմից ներկայացված է եղել նաև Դատական դեպարտամենտի կողմից կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտով: Հիշյալ ընթացակարգի շրջանակում նաև Լիազորագրի էլեկտրոնային թվային ստորագրության վավերականության վերաբերյալ դիրքորոշում ստանալու նպատակով՝ Դատական դեպարտամենտը 14.02.2023թ. N ԴԴ-3-Ե-1145 գրությամբ (կցվում է) դիմել է տվյալ ոլորտը կարգավորող մարմնին՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ /ԷԿԵՆԳ/» ՓԲԸ-ին, որին ի պատասխան «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ից ստացվել է 15.02.2023թ. հ. 3074 գրությունը (կցվում է), որի համաձայն՝ Լիազորագիրը պատշաճ ստորագրված չէ:

2.3. Ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված 1.2) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

2.4. 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2023թ. մարտի 09-ին, ժամը 11:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/08» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11-րդ կետի պահանջներով՝ Յասոն ՍՊԸ-ի հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ

անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով ծանուցել հիշյալ մասնակցին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **մարտի 07-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Նորայր Աղամալյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Անդրանիկ Աբգարյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք.Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773, www.court.am

№ ԴԴ-3-Ե-1145

« 14 » փետրվարի 2023թ.

«ԷԿԵՆԳ» ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆ ԼԵՈՆԻԴ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավետիսյան,

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետով սահմանված է, որ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Այս կապակցությամբ՝ կից ներկայացնում ենք Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային նյութերի (ապրանքների) ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում Յասոն ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը (էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ Հավելված 1, իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված 1.2, լիազորագիր) և խնդրում հնարավորինս սեղմ ժամկետում տալ կարծիք նշված փաստաթղթերում մասնակցի կողմից դրված էլեկտրոնային թվային ստորագրությունների հիշյալ նորմով սահմանված պահանջներին համապատասխանության վերաբերյալ:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ **ԱՐԵՆ ՄԵՍՐՈՊՅԱՆ**

Կատ.՝ Նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչություն, Գնումների համակարգման բաժին
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788

«ԷԿԵՆԳ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010,
Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ
Հեռ՝ 060 460405
info@ekeng.am
www.ekeng.am

հ. 3074
15.02.2023

Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմի
Դատական դեպարտամենտի
Ղեկավարի ֆինանսատնտեսական հարցերով տեղակալ
Արեն Մեսրոպյանին

Հարգելի պարոն Մեսրոպյան

Ի պատասխան Ձեր՝ 2023 թվականի փետրվարի 14-ի թիվ ԴԴ-3-Ե-1145 գրության՝ տեղեկացնում ենք, որ Ձեր կողմից էլ. փոստի միջոցով ներկայացված Յասոն ՍՊԸ-ի էլեկտրոնային փաստաթղթերը պատշաճ ստորագրված չեն:

Հարգանքով՝
«ԷԿԵՆԳ» ՓԲԸ տնօրեն
Լ. Ավետիսյան

2/15/2023

X

Signed by: AVETISYAN LEONID 1610790049